

## **Նորակազմ անականների կազմության միջոցներն ու եղանակները**

*Մարզայան Նոանե*

**Հանգուցային բառեր.** նոր բառեր, բառակազմական հիմք, բառակազմական քայլ, ձևույթ, ածանցում, բառաբարդում

### **Նախաբան**

Լեզվի բառային կազմը մշտապես փոփոխվող լեզվական համակարգ է: Այն հարստանում է նոր բառերով, դրան զուգահեռ որոշ բառեր դադարում են գործածվել ունենալ և վերածվում են հնաբանությունների: Շարունակաբար կատարվող այս գործընթացը պայմանավորված է ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական գործոններով:

Հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում կատարվող փոփոխությունները նախադրյալ են լեզվի բառապաշարը նորակազմ բառերով հարստացնելու համար: Առաջ են գալիս նոր առարկաներ, երևույթներ, որոնք լեզվում արդեն գոյություն ունեցող կազմությունները չեն արտահայտում և չեն անվանում, ուստի նոր բառեր կազմելու կարիք է լինում: Հաճախ նոր բառերի կազմության համար հիմք է դառնում օտար տերմինը հայերեն համարժեք տարբերակով փոխարինելու պահանջը: Բառերի կազմության համար լեզուն օգտագործում է սեփական բառակազմական միջոցներն ու եղանակները: Ընդ որում՝ նորակազմ բառերի քննությունն էլ իր հերթին ցույց է տալիս, թե այդ միջոցներից ու եղանակներից որոնք են առավել գործուն և կենսունակ: Այս առումով նման ուսումնասիրությունը լեզվի համաժամանակյա քննության, նրանում գործածվող միավորների վերլուծման և ներկայացման համար կարևոր ու արդիական է:

Մեր այս հոդվածում քննում ենք «Նոր բառեր» բառարանի Ե և Զ պրակներում հավաքված մոտ 1500 նորակազմ անականները՝ դիտարկելով դրանց կազմության համար կիրառվող լեզվական միջոցներն ու եղանակները, ներկայացնելով անականների կազմության համար արդի փուլում առավել տարածված կաղապարները:

### **Նորակազմ անականների կազմության միջոցները**

Բառերի կազմության միջոցներ են համարվում ձևույթները՝ որպես բառի իմաստային միավորներ: Լեզվաբանության մեջ ընդունված է տար-

բերակել հիմնական կամ արմատական և երկրորդական ձևույթներ: Հիմնական ձևույթը «արտահայտում է բառի առարկայական-տրամաբանական նշանակությունը: Այն իմաստակիր ավելի փոքր միավորների այլևս չի բաժանվում» [6, 234]:

Երկրորդական ձևույթների դեպքում տարբերակվում են ձևակազմական և բառակազմական ձևույթներ: Մեզ այս առումով հետաքրքրում են բառակազմական ձևույթները՝ նախածանցներ, վերջածանցներ, ներածանցներ, որոնք, ավելանալով բառին, կազմում են նոր բառ՝ նոր իմաստով:

Նոր բառի կազմությանը մասնակցում են հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթները, որոնք ավելանում են բառի հիմքին, որն է՝ «լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը» [3, 107]: Փաստորեն բառակազմական հիմքին նշված որևէ ձևույթի ավելացումով կարելի է կազմել լեզվում կիրառելի նոր բառ:

Լեզվաբանության մեջ տարբերակվում են բառակազմական հիմքերի տարբեր տեսակներ: Ներկայացնենք դրանք՝ դիտարկելով նորակազմ ածականների համապատասխան օրինակներ:

Տարբերակվում են պարզ՝ այլևս անտրոռելի, և բաղադրյալ հիմքեր, որոնք կարող են լինել ածանցավոր կամ երկու պարզ հիմքից կազմված՝ *այրանման, ածխե, մշտազգա, մշուշաթաց, վանհիլաբույր*:

Լեզվաբանության մեջ առանձնացվում են նաև **փոփոխվող** և **չփոփոխվող** բառակազմական հիմքեր:

Չփոփոխվող հիմք ունեն, օրինակ՝ *արյունեփ, արյունաբոսոր, ծառածն, ծովակապույտ, պատառաչափ, սպիտակափոր, օդաբույր* ածականները:

Փոփոխվող հիմքերը իրենց հերթին լինում են՝

- *հնչյունափոխական*, երբ հիմքում շեշտի դիրքի փոփոխությամբ կատարվում է հնչյունափոխություն՝ *արնակարմիր (ու>Օ), բազմագունեղ (ու>Օ), եղնջե (ի>ը), հնահամ (ի>ը), հրաձերմակ (ու>ը)*:
- *հավելատարրային*: Այս դեպքում բառակազմության գործընթացում ավելանում են լրացուցիչ միավորներ, որոնք չկան արմատում, ինչպես՝ *ա* հոդակապը, *ն* գրաբարյան վերջնահնչյունը, *յ* ձայնակապը և այլն, օրինակ՝ *արքայակառույց, բյուջետազող, հարսնաբույր, մարգարտագօծ, միկրոձեռնարկատիրական, ծոռնատեր* և այլն:
- *սղատարրային*: Որոշ միավորներ հիմքում ընկնում են, օրինակ՝ *ի*

ձայնավորը կամ օտար *իս, ոս* և այլ բաղադրիչներ՝ *կիսահսպանացի, թերագնահատիչ* և այլն: Ս. Գալստյանը նկատում է, որ «յուրատեսակ սղատարրային հիմքեր են ստեղծվում, երբ կատարվում է ածանցի անկում՝ նրա բառակազմական նշանակության պահպանմամբ» [3, 110], ինչպես՝ *անտառատնտեսական-անտառային և տնտեսական, կրոնաբարեգործական-կրոնական և բարեգործական, չարափայլ-չարությամբ փայլող* և այլն:

- *բառակապակցական*: Այս հիմքերը շարահյուսական ազատ կամ կայուն բառակապակցություններից են առաջանում՝ ածանցման կամ բարդման եղանակով: Այդպիսին են, օրինակ, *թանձրահեղուկ, թավշաքայլ, ժանգակարմրագույն, խավազերծ, կլորսեղանային, հուսապակաս* և այլ ածականներ:
- *բառաձևային*: Այս դեպքում նախահիմքը, որին ավելացնում ենք հաջորդ ձևույթը, բառի որևէ հարացուցային ձև է, օրինակ՝ *գարնանաթարմ, գերերևակայական* և այլն:

Տարբերակվում են նաև *սերող* և *բաղադրող* հիմքեր: Սերող է համարվում այն հիմքը, որին ավելանում է մեկ այլ բաղադրական հիմք կամ ածանց, իսկ բաղադրողը համապատասխանաբար ավելացող հիմքն է: Մեծ մասամբ ըստ հաջորդականության՝ աջակողմյան հիմքը բաղադրողն է, ձախակողմյանը՝ սերողը, սակայն երբեմն բաղադրող հիմքը ևս կարող է սկզբից ավելանալ [1, 247-248], [4, 28]:

Հետաքրքիր է նաև այն, որ արդի հայերենում նոր բառեր հաճախ կազմվում են օտար բառահիմքը որպես բաղադրող հիմք ավելացնելով, օրինակ՝ *ագրոպարենային, էթնոերաժշտական, էկոջազային, էկոմշակութային* և այլն:

Ստացվում է, որ նոր բառ կազմելիս առկա հիմքին որևէ ձևույթ է ավելացվում: Այդ ձևույթի ավելացումը բառակազմական գործընթացում համարվում է բառակազմական քայլ: Բառակազմական քայլում իրար միացող ձևույթները համարվում են անմիջական կազմիչներ [3, 114]: Այսպես:

Եթե դիտարկենք *գերլուսնային, գեղարվեստափաստագրական, մոխրաերկինագույն, նախամայրամուտային, տնտեսաարդյունաբերական* ածականները, ապա կարելի է տեսնել, որ *գերլուսնային* բառում վերջին քայլում ավելացել է *-ային* ածանցը, *մոխրաերկինագույն, նախամայրամուտային, տնտեսաարդյունաբերական* բառերի դեպքում համապատասխանաբար *մոխր(ա), նախ(ա), տնտես(ա)* բաղադրիչները: *Գեղարվեստափաստագրական* բառի անմիջական կազմիչներն են *գեղարվեստական* և

*փաստագրական* բաղադրյալ հիմքերը: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ եթե վերջին քայլում ավելացել է ածանց, ապա այդ նոր բառը կազմվել է ածանցման միջոցով, իսկ եթե հիմք է ավելացել, ապա բառաբարդման: Ուրեմն, *գերլուսնային*, *նախամայրամուտային* բառերը ածանցման, իսկ մյուսները բառաբարդման եղանակով կազմված ածականներ են: Այս ամենը ներկայացնենք բառակազմական վերլուծության միջոցով՝ ցույց տալու համար բառի կազմության ընթացքը՝

գերլուսնային – [գեր (լուսն)]ային

մոխրաերկնագույն – մոխր/ա[ (երկն/ա)գույն]

նախամայրամուտային – նախ/ա{[(մայր/ա)(մուտ)]ային}

տնտեսաարդյունաբերական – [(տն) (տես/ա) ական↓]({(արդ) յուն/ա] (բեր) } ական)

գեղարվեստափաստագրական – [(գեղ) (արվեստ/ա)

ական↓]({(փաստ/ա) [(գր) ական]}

Միևնույն նախատիպն ունեցող բառերը կարող են կազմել բառակազմական փունջ և ցույց տալ ընդհանուր հիմքից կազմված բառերի ամբողջությունը: Նշված պրակներում նորակազմ ածականների քննության ժամանակ գտել ենք *կորոնավիրուս* հիմքից կազմված *կորոնավիրուսային*, *հակակորոնավիրուսային* ածականները: Այս բառերը բառակազմական փնջում կազմում են բառակազմական զույգ, և նրանց միջև կապը անմիջական է:

Բառակազմական փնջի միջոցով կարելի է որոշել նաև բառերի պատճառաբանվածությունը: Այս դեպքում բառերի իմաստները հնարավոր է բխեցնել այդ բառերը կազմող բաղադրիչների իմաստներից: Բառի պատճառաբանվածությունը լինում է արտաքին (բնաձայնություններ, նմանաձայնություններ) և ներքին: Ներքին պատճառաբանվածության դեպքում տարբերակում ենք ձևությամբական և իմաստաբանական պատճառաբանվածություն: Եթե ձևությամբական պատճառաբանվածության դեպքում բառիմաստը դառնում է առանձին ձևայինների իմաստների հանրագումար, ապա իմաստաբանական պատճառաբանվածության դեպքում իմաստը պետք է բխեցել ըստ բառակազմական փնջի մեջ մտնող բառակազմական շղթայի, քանի որ յուրաքանչյուր հաջորդի իմաստը պայմանավորվում է նախորդ բառի իմաստներից մեկով: Պետք է նկատի ունենալ, որ «պատճառաբանողն այն բառն է, որի համար տվյալ կարգի իմաստն առաջնային է» [7, 14] :

Առանձնացվում է նաև *անուղղակի* և *ուղղակի* պատճառաբանվածություն: Ուղղակի պատճառաբանվածության դեպքում երկու ձևայիններն

էլ անկախաբար կիրառվում են, իսկ անուղղակիի դեպքում գոնե մեկը անկախ գործածություն չունի, և «նման արմատ ունեցող բառերի իմաստները մենք պատճառաբանում ենք ոչ թե ուղղակիորեն համեմատելով բաղադրյալ բառը և իր արմատը, այլ համեմատելով միևնույն արմատից կազմված բառերը իրար հետ» [6, 272]:

Այս հարցերը քննելիս պետք է անդրադառնալ նաև պատճառաբանող հատկանիշին, այսինքն՝ այն հատկանիշին, որը ամենաբնորոշն է և առարկան անվանելիս առանձնացվում է ու առաջնային դառնում: Այդպիսի հատկանիշ կարող է լինել գտնվելու տեղը՝ *արաքսամերձ, ջունգլիաբնակ*, նյութը, որից պատրաստված է՝ *հախճասալիկե, նշակարկան-դակե, կարմրադյուսե*, կատարած գործողությունը՝ որպես բնորոշում՝ *հետացույց, հուսահատիչ* և այլն:

### **Նորակազմ ածականների կազմության եղանակները**

Նախորդ հատվածում քննեցինք այն միջոցները, որոնցով լեզվում ստեղծվում են նոր բառեր: Այդ ձևույթների կապակցումը իրականացվում է որոշակի եղանակներով: Լեզվում բառերի կազմության եղանակներն են բառաբարդումը, ածանցումը և հապավումը: Ածականները կազմվում են բառաբարդման և ածանցման միջոցով:

**Բառաբարդում:** Բառաբարդման ժամանակ երկու կամ ավելի հիմքեր կցվում կամ հարադրությամբ կապվում են՝ ի հայտ բերելով նոր բառ: Այս բառերը ունենում են մեկ ընդհանուր շեշտ: Բառաբարդման եղանակով են կազմվել, օրինակ, հետևյալ համադրական ածականները՝ *թավջաքայլ, թացուրթոռ (իմաստը՝ անձրևային), կորովատես, հողաթուխ, մշուշաթխակապույտ, սևականաչ, վիատադեմ* և այլն:

Առաջնորդվելով Ս. Գալստյանի ներկայացրած բառակազմական կաղապարներով՝ կարող ենք նշել ածականների կազմության հետևյալ կաղապարները.

**NN գոյական+գոյական** – *աթոռագերի, շաղգամաբույր*

**NV գոյական+բայարմատ** – *գոլֆասեր, ձգնաժամածին*

**NA գոյական+ածական** – *լուսնաձերմակ, մարմնամերկ, մեղրադեղին, պողպատագորշ*

**AN ածական+գոյական** – *կարծրափուշ, կարճաբեղ, փափկաներբան, կարմրատերև*

**AV ածական+բայարմատ** – *թխածին, կեղծատես*

**AA ածական+ածական** – *խստալուրջ, կարմրաձերմակ, փափկամեղմ*

**AA** կառույցի դեպքում առաջին բաղադրիչը «սաստկացնում է ածականի արտահայտած իմաստը կամ արտահայտում է երկրորդ բաղադր-

րիչի արտահայտած հատկանիշի երանգները» [2, 19-24]:

**VV Բայարմատ+բայարմատ** – *ազդակիր*: Ինչպես նշում է Ս. Գալստյանը, այսպիսի կազմությունները սակավ են, և առաջին բայական արմատը հանդես է գալիս անվանական կիրառությամբ, քանի որ բայը բայի լրացում չի կարող լինել [2, 22]:

Այս կաղապարներից *գոյական+ածական, ածական+գոյական, նաև ածական+ածական* կաղապարներն են գործուն արդի հայերենում ածականներ կազմելիս:

**Ածանցում**: Ածանցումը հիմքին ածանցի ավելացումով նոր իմաստով նոր բառ կազմելու եղանակն է: Նորակազմ ածականների կազմության մեջ ակտիվորեն կիրառվում են ինչպես նախածանցներ, այնպես էլ վերջածանցներ: «Նոր բառեր» բառարանի Ե և Զ պրակներում ածականներ կազմվել են հիմնականում այս ածանցներով.

**Նախածանցներ**

**ան-** - անկասեցնելի, անվերաբերելի

**ապ-** - ապաբարոյական

**գեր-** - գերադքատ, գերերիտասարդ, գերուշաղիբ, գերհետաքրքիր, գերփխրուն, գերքաղցր

**ենթ/ա** -- ենթաձայնային

**հակ/ա** - - հակաբորբոքիչ, հակաիրանական, հակակարկտային, հակաձգնաժամային

**համ/ա** - - համաբուհական, համաերևանյան, համաարցախյան

**նախ/ա** - - նախասթրեսային, նախասուրբծննդյան,

նախաարտադրական

**Վերջածանցներ**

**-ական** - անտառապահպանական, հեքիաթագիտական, երկրացիական

**-ային** - գիշատչային, զարդաքանդակային, թռչակային, խամաճիկային, ցնորքային

**-ան** - կծկծան

**-անի** - երկֆոնուսանի, հինգբլթականի

**-անոց** - երկսենյականոց, չորստեղանոց

**-ավոր** - եռանկյունավոր, թեկապավոր, կապտագուլավոր

**-ավուն** - գորշասևավուն, կաթնաքաղցրավուն, մեղրավուն

**-ե** - մամոե, ածխե, կոկոսե, անուշաբլիթե, քաղցրամրգե

**-յան** - ազդրակողմյան, նժդեհյան, սևանյան

**-ովի** - ծածկովի, կանգնովի, կրծովի

-**ոտ** - արբունքոտ, մազմզուկոտ, մզոտ

-**ուն** - գեղաձփուն

Արդի հայերենում նորակազմ ածականների կազմության ամենագործուն նախածանցներն են *հակա-*, *համա-*, *նախա-*, *գեր-* ածանցները, իսկ վերջածանցներից՝ *-ական*, *-ային*, *-ավոր*, *-ավուն*, *-ե* ածանցները: Ներկայացնենք ածանցման եղանակով այդ ածանցներից կազմված ածականների քանակը՝ ըստ վիճակագրության.

նախածանցներ				վերջածանցներ				
հակա	համա	նախա	գեր	ական	ային	ավոր	ավուն	ե
40	22	29	25	27	61	8	32	45

Գ. Ջահուկյանը տարբերակում է ածանցման տարասեռ և համասեռ կաղապարներ: Համասեռ է համարում այն կաղապարները, որոնց դեպքում բառակազմությունը մնում է միևնույն խոսքի մասի սահմաններում: Տարասեռ են այն կաղապարները, որոնց դեպքում տեղի են ունենում խոսքիմասային անցումներ [5, 168]: Մեր քննության շրջանակներում, փաստորեն, համասեռ կաղապարով միայն ածականներից կարող են ածականներ կազմվել: Մյուս դեպքերում ածականները կկազմվեն տարասեռ կաղապարներով: Այսպես:

Ածական հիմքով համասեռ կաղապար՝ *գերխիստ – aA*, *մզոտ – Aa*

Գոյական հիմքով տարասեռ կաղապար՝ *թեկապավոր – SSa*, *ածխե – Sa*, *կոկոսե – Sa*

Թվական հիմքով տարասեռ կաղապար՝ *քառասունհազարանոց – NnNa*

Բայական հիմքով տարասեռ կաղապար՝ *բռնողական – Va*

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ն՝ ածանցման, և՛ բառաբարդման միջոցով արդի հայերենում ակտիվորեն կազմվում են մեծ թվով ածականներ: Դրանք գործածական են գեղարվեստական, գիտական գրականության, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության լեզվում, արձանագրվում են նորակազմ բառարաններում:

### Եզրակացություն

Կատարված վերլուծություններից ելնելով՝ կարող ենք հանգել հետևյալին՝

- նորակազմ ածականների բառակազմական քննությունը հնարավորություն է տալիս ներկայացնել արդի հայերենում ածականների

կազմության առավել գործուն քառակազմական միջոցներն ու եղանակները,

- ածականների կազմությանը մասնակցող հիմնական և երկրորդական բառակազմական ձևությունները ավելանում են ինչպես փոփոխվող, այնպես էլ չփոփոխվող հիմքերին,
- արդի հայերենում ածականները մեծ մասամբ կազմվում են բառաբարդման եղանակով, քանի որ դիտարկված օրինակներում վերջին քայլում հիմնականում ավելանում է պարզ կամ բաղադրյալ հիմք,
- ածականներ կազմվում են տարբեր խոսքի մասերից: Ամենագործունը *գոյական+ածական, ածական+գոյական* կաղապարներն են,
- ածանցներից առավել գործուն են վերջածանցները, մասնավորապես՝ *-ական, -ային, -ավոր, -վուն, -ե* ածանցները:

### **Գրականություն**

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 1984, 372 էջ:
2. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալս. հրատ., 1978, 326 էջ:
3. Գալստյան Ս., Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, Երևանի համալս. հրատ., 2007, 196 էջ:
4. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալս. հրատ., 1990, 408 էջ:
5. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:
6. Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Ֆելեքյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:
7. Տիտյան Ս., Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում, երկրորդ լրամշակված հրատ., հեղ. հրատ., Երևան, 2013, 288 էջ:

### **Աղբյուրներ**

- «Նոր բառեր. Ե պրակ», Երևան, «Գիտություն» հրատ., 2020:  
«Նոր բառեր. Զ պրակ», Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021:



## Средства и способы образования новейших прилагательных

Саргсян Нране

### Резюме

**Ключевые слова:** новые слова, словообразовательная основа, словообразовательный шаг, аффиксация, словосложение

Синхронное изучение состава новообразованных прилагательных способствует представлению словообразовательных закономерностей в современный период языка, выявлению действенных шаблонов, средств и способов. Было изучено около 1500 новых прилагательных из словаря “Новые слова” выпусков 5 и 6. Изучение этих прилагательных показало, что прилагательные образуются как от вторичных словообразовательных морфем – аффиксов, или корней простых основ, так и от составных основ путем добавления к изменяющимся и неизменяемым словообразовательным основам. То есть добавляемый компонент может быть составным, то есть иметь аффикс или состоять из двух корней. Интересно также то, что в современном армянском языке новые слова часто формируются путем добавления иностранного слова в качестве составной формы, например *ազրոպայրենային, էթնոէրաժշտական, էկոնոմիկային, էկոնոմիկային* и так далее. Компонент, добавленный на последнем шаге, определяется с помощью словообразовательного анализа, благодаря которому не только видно, как было образовано слово, но и путем определения компонента, добавленного на последнем шаге, можно определить, как было составлено слово. Если добавляется аффикс, то слово образуется путем аффиксации, а если простая или составная основа, то путем словосочетания. В современном армянском языке прилагательные образованы с помощью аффиксации и словосложения. При изучении прилагательных, образованных с помощью словосложения, мы заметили, что преобладают сопоставительные прилагательные, например, *հողաթուի, մշակաթխական, անականաչ, լիատաղեւ* и так далее. Прилагательные могут быть образованы шаблонами, состоящими из разных частей речи. Наиболее часто используемые формами являются – существительное + прилагательное, прилагательное + существительное. В современном армянском языке наиболее часто используемыми приставками в новообразованных прилагательных являются *հակա-, համա-, նախա-, գեր-*, например *հակաբորքորիչ, հակաիրանական, համարուհական, համաերևանյան, նախաթրեսային, գերադաս, գերերիտասիրի* и так далее, а от суффиксов *-ական, -ային, -ավոր, -ավուն, -ե*, например *անտառապահական, հեքիաթագիտական, գիշատչային, զարդարանդակային, եռանկյունավոր, ածխե, կոկիե* и так далее. Из аффиксов наиболее активны суффиксы. Составные прилагательные образуются из однородных и неоднородных форм.

# Means and Methods of Formation of the Newest Adjectives

*Sargsyan Nrane*

## Summary

**Key words:** *new words, word-formation basis, word-formation step, morpheme, derivation, word formation.*

Synchronous study of the composition of the newest formed adjectives contributes to the presentation of word-formation standards in the modern period of the language, the identification of the most used models, means and methods. About 1,500 new adjectives from the “New Words” dictionary, issues 5 and 6 were studied. The study of these adjectives has shown that adjectives are formed both from secondary word-formation morphemes – affixes, or simple-root bases, and compound bases by adding to changeable and unchangeable word-formation bases. That is, the added component can be composite, thus, have an affix or consist of two roots. It is also interesting that in the modern Armenian language, new words are often formed by adding a foreign word as a compound form, for example *ազրոսպարենային, էթնոտերաժշտական, էկոջազային, էկոմշակույթային*.

Using word-formation analysis, the component added in the final phase is identified. By identifying the component added in the final step, one can infer how the word was formed. If an affix is added, the word is formed by affixation; otherwise, if a simple or compound base is added, then by word formation.

In modern Armenian, adjectives are formed using affixation and word formation. When studying adjectives formed with the word composition, we noticed that synthetic adjectives predominate, for example *հոդաթույս, մշուշաթխակապույտ, սևականաչ, վհատադեմ* etc. Adjectives can be formed by models consisting of different parts of speech. The most used forms are noun + adjective, adjective + noun. In the modern Armenian language the most used prefixes in the newest formed adjectives are *հակա-, համա-, նախա-, գեր-*, for example *հակաբորբոքիչ, հակաիրանական, համաբուհական, համաերևանյան, նախասթրեսային, գերադքատ, գերերիտասարդ* etc, and from the suffix *-ական, -ային, -ալոր, -ալուն, -ե*, for example *անտառապահական, հեքիաթագիտական, գիշատչային, զարդաքանդակային, եռանկյունալոր, ածխե, կոկսե*. Of the affixes, suffixes are the most active. Compound adjectives are formed from congeneric and non congeneric forms.

Ներկայացվել է 15.10.2022 թ.

Գրախոսվել է 02.11.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.